

**ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2018-2019 ուս. տարվա
գիտական խորհրդի ընդլայնված նիստի**

ք.Երևան

20 նոյեմբերի 2018թ.

Օրակարգում՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա.Ս. Սադյանի տարեկան հաշվետվությունը:

Նիստին ներկա էր՝ Երևանի պետական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Արամ
Սիմոնյանը:

Նիստը նախագահելու համար առաջարկվեց Կենսաբժշկագիտության ամբիոնի
վարիչ, բ.գ.դ. Ռ. Հովհաննեսյանի, իսկ որպես քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դադայանի
թեկնածությունները:

Լսեցին՝ Նիստի նախագահը ձայնը տվեց Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի
պաշտոնակատար Աշոտ Սերոբի Սադյանին, ով ներկայացրեց հաշվետվությունը
(հաշվետվությունը կցվում է): Ելույթի վերջում Ա. Սադյանը հատուկ
շնորհակալություն հայտնեց ռեկտոր Արամ Սիմոնյանին՝ Ֆարմացիայի
ինստիտուտի կայացման և հետագա զարգացմանն աջակցելու համար և
պատասխանեց ներկաների հարցերին:

Ելույթ ունեցան՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի ֆարմաեխնոլոգիայի և
ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչ, կ.գ.թ.
Ա. Հովհաննիսյանը, փոխտնօրեն, ք.գ.թ. Ս. Վարդապետյանը, ուսանողական
խորհրդի անդամ Արտյոմ Համբարձումյանը, ովքեր իրենց երախտիքի խոսքն
ուղղեցին ակադեմիկոս Ա. Սադյանին: Ելույթ ունեցողները հատկապես
կարևորեցին այն հանգամանքը, որ տնօրենի պաշտոնակատար
Ա. Սադյանը ջանք ու եռանդ չի խնայում Ֆարմացիայի ինստիտուտի կայացման
համար: Նա իր անձնական օրինակով ոգևորում և մասնագիտական

առաջխաղացման է մղում և՛ դասախոսական կազմին և՛ ուսանողությանը: Նրանք նշեցին, որ ինստիտուտում տեղի ունեցող դրական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում, ինչը նաև տնօրենության ճիշտ կազմակերպված աշխատանքի արդյունքն է: Արտյոմ Համբարձումյանը հավելեց նաև, որ նորագույն սարքավորումներով հագեցած լաբորատորիաներում ուսանողները հնարավորություն ունեն ուսումնառության ընթացքում ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել նաև փորձնականում: Այդ ամենի շնորհիվ նաև ուսանողները ակտիվորեն ներգրավվում են ուսանողական գիտական ընկերության աշխատանքներին: Ուսանողներին հնարավորություն է ընձեռվել նաև բարձր մակարդակով իրականացնել իրենց ավարտական և մագիստրոսական աշխատանքները:

Ելույթ ունեցողներն առաջարկեցին դրական գնահատել ինստիտուտի և, մասնավորապես, Ա. Սաղյանի գործունեությունը:

Ելույթի ունեցավ նաև ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանը, ով իր գոհունակությունը հայտնեց Ա.Ս. Սաղյանին՝ մանրամասն և հետաքրքիր զեկուցման համար: Նա կարևորեց հատկապես այն հանգամանքը, որ ինստիտուտում շարունակվում է բանիմաց և երիտասարդ կադրերով համալրման գործընթացը:

Ռեկտոր Ա. Սիմոնյանը նշեց, որ ինչպես պարզ դարձավ հաշվետվությունից, 2017-2018 ուս. տարում պլանավորված բոլոր աշխատանքները կատարվել են բարձր մակարդակով: Հատկաես ողջունելի էր ինստիտուտի կողմից ֆարմացիայի բնագավառին վերաբերող առաջին միջազգային գիտաժողովի՝ նվիրված ՀՀ ԳԱԱ 90 և ԵՊՀ 100-ամյակներին: Այն խթան հանդիսացավ ֆարմացիայի և դրան հարակից բնագավառներում կարևորագույն նվաճումների և մշակումների ցուցադրման, ոլորտի հանրաճանաչ մասնագետների, դեղագործական ընկերությունների և երիտասարդ գիտնականների միջև երկխոսության կազմակերպման, ինչպես նաև նոր գործընկերների ձեռք բերման համար:

Ամփոփելով ելույթները՝ ռեկտոր Ա. Սիմոնյանն առաջարկեց դրական գնահատել տնօրենի պաշտոնակատար Ա. Սադյանի հաշվետվությունը:

Որոշեցին՝ (միաձայն) հաստատել Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար Ա. Սադյանի հաշվետվությունը և այն գնահատել դրական:

Նիստի նախագահ՝

Կենսաբժշկագիտության ամբիոնի
վարիչ, Բ.Գ.Պ

Ռ.Ա. Հովհաննեսյան

Գիտական քարտուղար, ք.գ.թ.՝

Ա. Ս. Դադայան